առաւօտ աշխատում էի… Ցերեկները գործում՝ գիշերները գրում։

Սկզբում կարծում էի, թէ մի փոքրիկ գրքոյկ է լինելու մի քանի էջերից բաղկացած, բայց երբ աւելի լրջօրէն լծւեցի աշխատանքի տեսայ, որ գործս աւելի է ընդարձակւում քան ինչ ես նախատեսում էի։ Վերջապէս պատրաստեցի. մի նոյնքան էլ նեղութիւն ունեցայ տպագրելու համար… վերջապէս կարողացայ լոյս ընծայել՝ «Պատմութիւն Հնդկահայոց» վերնագրով՝ նուիրելով այն ժամանակայ քաղաքակիրթ Եւրոպայի մեծագոյն դէմքերից մէկին այն է Գլադստոնին…»։

***

Նա խոստացաւ յարմար ու լաւ պայմաններում լրացնել իր «Պատմութիւն Հնդկահայոց» գիրքը եւ հասցնել մինչեւ մեր օրերը… Մաղթեցի ոյժ ու կորով մեր բազմավաստակ գրագիտին։ — Երախտագիտական զգացումներով սեղմենք նրա վաստակաւոր ձեռքը ու մեծարանքով ասենք. «փառք ու յարգանք Քեզ»։

Կալկաթա Ա. Թ. ԱԼԼԱՀՎԷՐԴԵԱՆ

## ՀԱՅ ՍՐԲԱԶԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆԸ

### ԲԱՏՈՒԱՅԻ ՄԷՋ

*Նոյեմբեր 25ին կիրակի օր, Հ. Ղեւոնդ Տայեան բանախօսութիւն մը կատարեց Բատուա* Cesare Pollini *Երաժշտանոցի դահլիճին մէջ, ուր եկած էին ընտիր բազմութիւն մը ունկնդիրներու լսելու Մխիթարեան վարդապետին ճառը հայ սրբազան երաժշտութեան վրայ որ առանձին շահեկանութիւն կը ներկայացնէր, լատին եկեղեցական երգերուն հետ ունեցած աղերսին համար։*

*Յետ տեսութիւններ կատարելու հայ եկեղեցական երգերու ութ ձայներու նկատմամբ, խօսեցաւ հայ Շարականոցի կազմութեան վրայ, մասնաւորապէս շարականներու երաժշտութեան մասին։ Համառօտ պատմականն ըրաւ այդ երաժշտութեան, և ապա ծանրացաւ անոր ինքնայատուկ նկարագրութեան վրայ, մելամաղձ և քաղցր զգացումներով օծուած, և կը թուի աւելի ներշնչուած ըլլալ բնութեան թրթռացումներէն, և հակամէտ պահպանելու այդ ազդեցութիւնը։ Ասկից անոր զանազանութիւնը լատին գրիգորեան երգերէն, թէև երկուքն ալ միևնոյն սկզբնաւորութիւնն ունեցած ըլլան։ Գրիգորեան երգերը առանձին, որոշ օրէնքներու և կապերու ենթարկուած են, մինչ հայ եկեղեցական երգը անհատին զգացման և ճաշակին թողուած է։*

*Յետոյ իր տեսութիւնները չօշափելի ընելու համար, երգերու նմոյշներ ճաշակել տուաւ ունկնդիրներու, միանգամայն ցոյց տալով գրիգորեան և հայ սրբազան երգերու զիրար գրկող և զիրար բաժնող կէտերը։*

*Բանախօսութիւնը վերջացաւ խանդավառ ծափահարութեամբ ու տեղական և Վենետիկի թերթերը գնահատական և գովեստի տողերով յօդուածներ նուիրեցին Հ. Ղեւոնդ Տայեանի սոյն ճառախօսութեան։*

ԽՄԲ.

digitised by A.R.A.R.@